Հաստատված է
«Սեղանի թենիսի
ազգային
պրոֆեսիոնալ
սպորտային լիգա»
ՍՊԸ-ի կողմից
(որոշում №2 10.12.2019)

ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ՄԻՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԹԻՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(խմբ. 15.01.2021)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Սեղանի թենիս» մարզաձևի հուշամրցաշարերի շրջանակներում անցկացվող սիրողական և պրոֆեսիոնալ թիմերի միջև մարզական մրցաշարերը համաձայն սեղանի թենիսի ֆեդերացիայի մրցումների օրացուցային պլանի 22-րդ կետի հանդիսանում են պրոֆեսիոնալ մարզական մրցաշարեր, մասնակցությունն ու հաղթանակը որոնցում ենթադրում է դրամական պարգև:
Մարզական մրցաշարերն անցկացվում են Խաղի կանոնների և մրցաշարերի անցկացման համաձայն, որոնք հաստատված են «Սեղանի թենիսի ազգային պրոֆեսիոնալ լիգա» ՍՊԸ-ի կողմից (որոշում N2 10.12.2019), ինչպես նաև Սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի International Table Tennis Federation (ITTF) կողմից հաստատված Սեղանի թենիս մարզաձևի կանոններով:

2. Մարզական մրցաշարերն անցկացվում են Հայաստանի Հանրապետությունում և առհասարակ աշխարհում սեղանի թենիսի զարգացման նպատակով:
Մարզական մրցաշարերի անցկացման խնդիրներն են՝
   1) Ուժեղագույն մարզիկներին ի հայտ բերելը
   2) Մարզիկների ընտրությունը՝ միջազգային մրցաշարերին պատրաստելու համար
   3) Մարզական հերթափոխի պատրաստումը

3. Արգելվում է անօրինական ազդեցություն ունենալ տվյալ կանոնակարգով նախատեսված մարզական մրցաշարերի արդյունքների վրա:
Արգելվում է մարզիկներին, նրանց պաշտոնական ներկայացուցիչներին (մարզիչներին), մրցավարներին և այլ անձանց, որոնք այս կամ այն եղանակով մարզական միջոցառումների մասնակցող, կազմակերպող և անցկացնող են, բուքմեյքերական գրասենյակներում և տոտալիզատորներում մարզական միջոցառումների վերաբերյալ դրամախաղերի մասնակցել կամ գրազ գալ:

II. ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն կանոնակարգով հստակեցվում է մարզական մրցաշարերի անցկացման կարգը:
Այլ իրավունքների և պարտականությունների, այդ թվում մարզիկներին և/կամ երրորդ անձանց պատճառված վնասի պատասխանատվությունը, իրականացվում է համաձայն պայմանագրերի,

որոնց կողմերից մեկը հանդիսանում են մարզական մրցաշարերի կազմակերպիչները:

III. ԲԺՇԿԱԿԱՆ, ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Մարզական մրցաշարերում անվտանգության ապահովումը իրականացվում է մարզական կառույցներում հասարակական կարգի ապահովման և հասարակական անվտանգության ընդհանուր կանոնների համաձայն:

Մարզական մրցաշարերի անցկացման ժամանակ հասարակական կարգը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով մարզական կառույցներոը պետք է ունենան հետևյալ սարքերը՝

ա) տեղեկատվական վահանակ և/կամ վահանակ

բ) Հասանելիության վերահսկման և կառավարման համակարգ

գ) Անվտանգության և տագնապի համակարգ

դ) Ավտանգության լուսավորության համակարգ

ե) Արտակարգ կապի համակարգ

2. Մարզիկի համար մարզական մրցաշարերում մասնակցելու թույլտվության հիմք է հանդիսանում մարզական մրցաշարերին մասնակցության հայտը՝ յուրաքանչյուր մարզիկի ազգանվան դիմաց «Թույլատրված է» նշումով (Հավելված 1):

3. Ոչ մի մարզիկ կամ այլ անձ, որի նկատմամբ կիրառվել է մարզական որակազրկում, իրավունք չունի մասնակցելու մարզական մրցաշարերի որակազրկման ժամանակահատվածում, այդ թվում մրցավարի կամ մարզչի (մարզիկի ներկայացուցչի) կարգավիճակում:

4. Մարզական մրցումների հակադոպինգային ապահովումը իրականացվում է Համաշխարհային հակադոպինգային կոդեքսի համաձայն, որը հաստատված է Համաշխարհային հակադոպինգային ընկերության հիմնադիրների Խորհրդի կողմից (ՎԱԴԱ):

IV. ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ԼԻԳԱ 2020

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սեղանի թենիսի լիգայում մասնակցում են մարզիկներ, որոնք կախված պրոֆեսիոնալ պատրաստվածության մակարդակից (ռեյտինգ) բաժանվում են երեք թիմ-խմբի (խումբ Ա, խումբ Բ և խումբ Գ):

1.2. Յուրաքանչյուր խմբի շրջանակներում մարզիկների միջև համաձայն խաղացանկի անցկացվում են կանոնավոր Մրցաշարեր:

1.3. Հանդիպման մեկնարկին մարզիկի չներկայանալու դեպքում, նրան գրանցվում է պարտություն:

1.4. Յուրաքանչյուր Մրցաշարի արդյունքներով մարզիկին գրանցում են Լիգաի դասակարգային միավորներ:

1.5. Օրացուցային ամսվա լրանալու պես ավարտվում է Լիգայի փուլը:

1.6. Մարզիկների դասակարգումը զրոյացվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա առաջին օրը, որից հետո սկսվում է Լիգայի նոր փուլը:

1.7. Մարզիկի դասակարգումը կախված է Լիգայի ընթացիկ փուլում վաստակած միավորներից:

2. Մարզիկների նկատմամբ կիրառվող պահանջները և մասնակցության թույլտվության

պայմանները

2.1. Մարզական մրցաշարերին մասնակցում են ուժեղագույն մարզիկները, որոնք որակավորվել են միանգամյա մրցաշարերի միջոցով:

2.2. Մարզական մրցաշարերի թույլատրում են մասնակցել 18 տարին լրացած արական և իգական սեռի ներկայացուցիչներին:

2.3. Մարզիկի պատկանելիությունը ֆիզկուլտուրա-մարզական կազմակերպությանը որոշվում է մարզիկի և ֆիզկուլտուրա-մարզական կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա: Մարզիկի պատկանելիությունը՝ մարզական նախապատրաստություն իրականացնող ֆիզկուլտուրա-մարզական կազմակերպությանը, կարող է որոշվել տվյալ անձին նման կազմակերպությունում գրանցելու հրահանգային ակտով:

2.4. Թույլատրվում եմ մրցախաղեր տղամարդկանց և կանանց միջև

2.5. Մասնակցության թույլտվություն ունեցող մարզիկների քանակը չի կարող գերազանցել 100-ը

3. Մասնակցության հայտ

3.1. Մարզական մրցաշարերի մասնակցության հայտը, ինչպես նաև այլ փաստաթղթերը ներկայացվում են մարզիկների մասնակցության թույլատրման հանձնաժողով: Մարզիկների մասնակցության թույլատրման հանձնաժողովը ներկայացնում է իրենից մրցավարական կոմիտեն ողջ կազմով: Բացի այդ Սեղանի թենիսի Լիգայի կազմակերպիչը կարող է մերժել մարզիկի հայտը:

3.2. Անհրաժեշտության դեպքում հայտին կարող են կցվել՝

-Քաղաքացու անձնագիրը, 14 տարեկանից ցածր մարզիկների դեպքում՝ ծննդյան վկայականը;

-ստուգարքային դասակարգման գրքույկը, մարզական կոչման վկայականը;

-բժշկական ապահովագրության ապահովագիրը

3.3. Գործող բժշկական ապահովագրության ապահովագիր ունենալու պարտավորությունը գտնվում է մարզիկի անձնական պատասխանատվության շրջանակում:

3.4. Այն մարզիկը, որի նկատմամբ կիրառվել է մարզական որակազրկում, և որը նման որակազրկման մասին չի հայտնել մասնակցության թույլատրման հանձնաժողովին, տվյալ արարքի համար կրում է անձնական և ամբողջական պատասխանատվություն:

4. Լիգայի մրցավարական կոմիտե

4.1. Լիգայի մրցավարական կոմիտեն ձևավորվում է լիգայի կազմակերպչի կողմից նշանակված մրցավարներից:

5. Մրցաշարի անցկացման կանոնները

5.1. Լիգայի փուլի շրջանակներում անց են կացվում կանոնավոր մրցաշարեր, ութ ժամ տևողությամբ:

5.2. Մրցաշարի շրջանակներում անց է կացվում 30 անհատական հանդիպում: Մեկ մարզիկն անց է կացնում 10 հանդիպում (իր խմբի մարզիկներից յուրաքանչյուրի հետ երկուական հանդիպում).

5.3. Հանդիպման հաղթող է ճանաչվում հինգ պարտիաներում հաղթած մարզիկը: Յուրաքանչյուր հանդիպման շրջանակում կարող է անցակացվել մինչ 9 պարտիա:

5.4. Հանդիպման հաղթանակի համար մարզիկը ստանում է 1 միավոր մրցաշարային աղյուսակում:

5.5. Մրցաշարի վերջին հանդիպման ավարտից հետո, մրցավարական կոմիտեն հաշվում է միավորները, հայտարարում հաղթողին և ֆիքսում տվյալները արձանագրությունում:

5.6. Մրցաշարի հաղթող է ճանաչվում բոլոր նշանակված հանդիպումների ավարտից հետո առավելագույն միավորներ հավաքած մարզիկը:

5.7. Մրցաշարում առաջին տեղը գրավելու համար մարզիկը ստանում է Լիգայի 3 ռեյտինգային միավոր:

Մրցաշարում երկրորդ տեղը գրավելու համար մարզիկը ստանում է Լիգայի 1 ռեյտինգային միավոր:

5.8. Անհատական մրցույթում երկու կամ ավելի մարզիկների մոտ միավորների հավասարության դեպքում, առավելություն է ստանում հետևյալ հետևողականորեն կիրառվող պայմաններով՝

ա) հաղթած և պարտված հանդիպումների լավագույն տարբերությամբ;

բ) հաղթած և պարտված պարտիաների լավագույն տարբերությամբ;

գ) վիճակ նետելով:

5.9. Մրցաշարի մրցավարական կոմիտեն բաղկացած է երեք իրավահավասար մրցավարներից: Յուրաքանչյուր հանդիպում սպասարկում է առնվազն երկու մրցավար; մեկը ներկա է գտնվում անմիջապես հանդիպմանը, երկրորդը հետևում է խաղի ընթացքին հեռահար, գտնվելով տեխնիկական սենյակում:

5.10. Հանդիպումների արդյուքները լրացվում են արձանագրությունում, որը հաստատվում է մրցավարական կոմիտեի կողմից: Արձանագրությունը կարող է կազմվել և պահպանվել էլեկտրոնային տարբերակով:

6. Լիգայի փուլի արդյունքների ամփոփումը

6.1. Յուրաքանչյուր մրցաշարի արդյունքներով մարզիկներին հաշվառվում են Լիգայի ռեյտինգային միավորներ:

6.2. Լիգայի փուլի հաղթող է դառնում առավելագույն ռեյտինգային միավոր հավաքած մարզիկը:

6.3. Օրացույցային ամսվա ավարտի հետ ավարտվում է նաև Լիգայի փուլը, մրցավարական կոմիտեն հաշվարկում է Լիգայի ռեյտինգային միավորները, հայտարարում հաղթողին և ֆիքսում արդյունքները Լիգայի փուլի արձանագրությունում: Նոր օրացույցային ամսին ավարտվող մրցաշարը, վերաբերվում է Մրցաշարի սկզբի ամսվա Լիգայի փուլին:

6.4. Եթե Լիգայի ռեյտինգային միավորները հաշվարկելուց, երկու և ավելի մարզիկ հավաքել են Լիգայի փուլի ռեյտինգային հավասար միավորներ, նախապատվություն է ստանում մարզիկը հետևյալ հետևողականորեն կիրառելի պայմաններով՝

ա) հաղթած և պարտված հանդիպումների լավագույն տարբերությամբ;

բ) հաղթած պարտիաների քանակությամբ;

գ) վիճակ նետելով:

6.5. Լիգայի փուլն ավարտվելուց հետո՝

- B և C ռեյտինգով խմբերում առաջին տեղը զբաղեցրած մարզիկները, երաշխավորված անցնում են համապատասխանաբար A և B ռեյտինգով խմբեր;
- A և B ռեյտինգով խմբերում վերջին տեղը զբաղեցրած մարզիկները, անցնում են համապատասխանաբար B և C ռեյտինգով խմբեր:
- B և C ռեյտինգով խմբերում երկրորդ տեղը զբաղեցրած մարզիկները, լիգայի կազմակերպիչների որոշմամբ կարող են անցնել համապատասխանաբար A և B ռեյտինգով խմբեր:

6.6. Խմբերի կազմերի ցանկացած փոփոխությունները իրականացվում են Լիգայի փուլի սկսելուց առաջ:

7. Հաղթողների պարգևատրումը

Լիգայի էտապի ավարտի արդյունքներով հաղթողները պագևատրվում են դրամական մրցանակներով հետևյալ կարգով՝

A խմբի մարզիկներ:

- 1 տեղը խմբում պարգևատրվում է 90 000 դրամ չափով դրամական մրցանակով:
- 2 տեղը խմբում պարգևատրվում է 60 000 դրամ չափով դրամական մրցանակով:

B խմբի մարզիկներ:

- 1 տեղը խմբում պարգևատրվում է 54 000 դրամ չափով դրամական մրցանակով:
- 2 տեղը խմբում պարգևատրվում է 36 000 դրամ չափով դրամական մրցանակով:

C խմբի մարզիկներ:

- 1 տեղը խմբում պարգևատրվում է 36 000 դրամ չափով դրամական մրցանակով:
- 2 տեղը խմբում պարգևատրվում է 24 000 դրամ չափով դրամական մրցանակով:

8. Հավելյալ անվանակարգեր

Տպավորչության առավել բարձրացման նպատակով Լիգայի փուլի ավարտից հետո մարզական մրցումների կազմակերպչի կողմից ավելացվում են հավելյալ անվանակարգեր A, B և C խմբերի մարզիկների միջև: Հավելյալ անվանակարգերում հաղթում է առավելագույն բոնուսային միավոր հավաքած մարզիկը, որոնք հաշվարկվում են ներքոնշյալից ելնելով՝

8.1. Ամենահաջողակ մարզիկ

Հանդիպման անցկացման ընթացքում, երբ գնդակը խաղի մեջ է, մարզական մարցումների կազմակերպիչը կատարում է թենիսի սեղանին գնդակի հարվածների քանակի հաշվարկ: Հաշվի են

առնվում թենիսի սեղանին միայն նշանակալի հարվածները:

Նշանակալի հարված ասելով հասկացվում է հպումը (հարված) սեղանի մակերեսին սեղանի մի կողմից մյուսը տեղաշարժման ընթացքում: Սեղանին գնդակի հարվածը, որը տեղի է ունեցել ցանցին գնդակի կպնելուց և թռել է հակառակ կողմը, հաշվի է առնվում: Սեղանին գնդակի հարվածը, որը տեղի է ունեցել ցանցին գնդակի կպնելուց և ՉԻ թռել հակառակ կողմը, հաշվի չէ առնվում:

Հարվածների քանակության հաշվարկը իրականացվում է տեխնիկական հատուկ սարքերի (ցուցատախտակ) միջոցով, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են անջատվել: Ցուցատախտակի անջատված լինելու ժամանակ, նշանակալի հարվածների հաշվարկ չի կատարվում:

Ցուցատախտակի աշխատանքի ալգոռիթմ՝

ա) "խաղում գնդակը 2" /ցուցատախտակ 1/, որին վառվում են 37 համարակալված պատահական հերթականությամբ տեղակալված վանդակներ, որոնցով անդադար տեղաշարժվում է կուրսորը, ֆիքսում է սեղանի մակարդակին գնդակի ամեն ութերորդ հարվածը: Սեղանի մակերեսին գնդակի ութերորդ նշանակալի հարվածի պահին, կուրսորը կանգ է առնում, այսպիսով որոշելով 1 մինչև 37 թվային արժեքով վանդակը: Թվային արժեքը համապատասխանում է բոնուսային միավորների քանակին, որոնք ավելացվում են ընթացիկ խաղի բոնուսային հաշվին: Դրանից հետո ցուցատախտակը մարում է և որոշ ժամանակ անց ցիկլը վերսկսում է:

բ) "խաղում գնդակը 7" ցուցատախտակ 2, որի վրա վառվում են 38 պատահական հերթականությամբ տեղակալված համարակալված վանդակներ, որոնցով անդադար տեղաշարժվում է կուրսորը, ֆիքսում է սեղանի մակարդակին գնդակի ամեն ութերորդ հարվածը: Սեղանի մակերեսին գնդակի ութերորդ նշանակալի հարվածի պահին, կուրսորը կանգ է առնում, այսպիսով որոշելով 1 մինչև 38 թվային արժեքով վանդակը: Թվային արժեքը համապատասխանում է բոնուսային միավորների քանակին, որոնք ավելացվում են ընթացիկ խաղի բոնուսային հաշվին: Դրանից հետո ցուցատախտակը մարում է և որոշ ժամանակ անց ցիկլը վերսկսում է:

գ) "խաղում գնդակը 3" ցուցատախտակ 3, որի վրա վառվում են 80 պատահական հերթականությամբ տեղակալված համարակալված վանդակներ, որոնցով անդադար տեղաշարժվում է կուրսորը, ֆիքսում է սեղանի մակարդակին գնդակի ամեն երկրորդ նղանակալի հարվածը: Գնդակի երկրորդ նշանակալի հարվածի պահին վանդակը, որի վրա գտնվում է կուրսորը, մարում է: Այսուհետ, կուրսորի տեղաշարժվելիս այս վանդակը բաց է թողնվում:Սեղանի մակերեսին գնդակի քառասուներորդ նշանակալի հարվածի պահին, կուրսորը կանգ է առնում, այսպիսով որոշելով 1 մինչև 80 թվային արժեքով վանդակը: Թվային արժեքը համապատասխանում է բոնուսային միավորների քանակին, որոնք ավելացվում են ընթացիկ խաղի բոնուսային հաշվին: Դրանից հետո ցուցատախտակը մարում է և որոշ ժամանակ անց ցիկլը վերսկսում է:

դ) "խաղում գնդակը 4" /ցուցատախտակ 4/, որի վրա վառվում են 90 պատահական հերթականությամբ տեղակալված համարակալված վանդակներ, որոնցով անդադար տեղաշարժվում է կուրսորը, ֆիքսում է սեղանի մակարդակին գնդակի ամեն երկրորդ հարվածը: Գնդակի երկրորդ նշանակալի հարվածի պահին վանդակը, որի վրա գտնվում է կուրսորը, մարում է:

Այսուհետ, կուրսորի տեղաշարժվելիս այս վանդակը բաց է թողնվում:Սեղանի մակերեսին գնդակի հարյուր քառասուներորդ նշանակալի հարվածի պահին, կուրսորը կանգ է առնում, այսպիսով որոշելով 1 մինչև 90 թվային արժեքով վանդակը: Թվային արժեքը համապատասխանում է բոնուսային միավորների քանակին, որոնք ավելացվում են ընթացիկ խաղի բոնուսային հաշվին:Դրանից հետո ցուցատախտակը մարում է և որոշ ժամանակ անց ցիկլը վերսկսում է:

դ) "խաղում գնդակը 8" (ցուցատախտակ 5), որի վրա վառվում են 40 պատահական հերթականությամբ տեղակալված համարակալված վանդակներ, որոնցով անդադար տեղաշարժվում է կուրսորը, ֆիքսում է սեղանի մակերեսին գնդակի ամեն հինգերորդ նշանակալի հարվածը: Գնդակի սեղանի մակերեսին հինգերորդ նշանակալի հարվածի պահին կուրսորը կանգ է առնում, այսպիսով որոշելով 1 մինչև 40 թվային արժեքով վանդակը: Թվային արժեքը համապատասխանում է բոնուսային միավորների քանակին, որոնք ավելացվում են ընթացիկ խաղի բոնուսային հաշվին:Դրանից հետո ցուցատախտակը մարում է և որոշ ժամանակ անց ցիկլը վերսկսում է:

Բոնուսային հանդիպումից բոնուսային միավորները ավելացվում են հանդիպման հաղթողի օգտին:

Բոնուսային միավորները գումարվում են և կուտակվում Լիգայի փուլի ընթացքում:
Լիգայի փուլի ավարտական արդյունքներով և հավաքված բոնուսային միավորների քանակով որոշվում է «Ամենահաջողակ մարզիկ» անվանակարգում հաղթողը, որը պարգևատրվում է 10 000 դրամի չափով դրամական մրցանակով:

9. Ֆինանսավորման պայմանները

9.1. Մարզական մրցումների պատրաստման նպատակով կազմակերպչական և անցկացման հետ կապված ծախսերը իրականացվում են սպորտային մրցաշարի կազմակերպչի հաշվին:

9.2. Գործուղումային ծախսերը (ճանապարհածախս, սնունդ, տեղավորում և այլն) կամ մարզիկների հաշվին են, կամ իրենց գործուղող կազմակերպությունների:

«Սեղանի թենիսի ազգային պրոֆեսիոնալ
սպորտային լիգա» ՍՊԸ-ի տնօրեն

Օհանյան

Հավելված № 1

Մարզիկների ընդունման հանձնաժողովին

Մասնակցության հայտ _____

(մրցույթի անվանումը)

ժամը _____

_____

(մրցույթի անցկացման վայրը և ամսաթիվը)

Մարզիկի անուն, ազգանուն, հայրանունը (լրիվ)	Ծննդյան ամսաթիվը	Սպորտային կատեգորիա (կոչում)	Անձնական մարզիչի անուն, ազգանուն, հայրանունը	Մրցույթին մասնակցության մուտքը (դրվում է դատավորի կողմից)

Դատավոր (Ա.Ա.Հ լրիվ, քաղաք): _____

Տեղեկատվություն բուժ. հաստատության մասին, այն հաստատությունը, որում մարզիկը բուժզննում է անցել	

_____ _____ _____

(ամսաթիվ) (մարզիչի ստորագրությունը) (ազգանուն, սկզբնատառերը)

Մարզիկի կոնտակտային հեռախոսը: